Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2-Հ1

17.07.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2
ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» « 08 » 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գյոզալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ հուլիսի 17-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:

1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.3 Հաստատել պայմանաագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, | Ք. Իջևան, Նալբանդյան 1/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | ՀՎՀՀ 07621825 |
| Հ/Հ 900011035251 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02698732 | Հ/Հ1570065208350100 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Տնօրեն |
| ______________ Վ. Գասպարյան | ______________ Ա. Գյոզալյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*« 28 » « 08 » 2020 թ. կնքված*
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2-Հ1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԻՋԵՎԱՆԻ ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ և ՏԱՆԻՔԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐԻ և ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ և ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետ | |
|---|---|---|---|
| | | Սկիզբ | Ավարտ |
| | Բաժին-1 | | |
| | Շինարարական աշխատանքներ | | |
| 1 | Առաջին մասնաշենքի ներքին հարդարման քանդման աշխատանքներ /առաջին մասնաշենքի առաջին հարկի ներքին հարդարման վերանորոգման աշխատանքներ. պրեսգրանիտե հատակ. լամինատե հատակ, մետլախե հատակ, նոր կառուցվող միջնորմներ/ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 2 | Բարավորների կառուցման ծավալները 1 հատի համար (Բ-1) | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 3 | Դռան բացվածքի ամրացման ծավալներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 4 | Երկրորդ մասնաշենքի ներքին հարդարման քանդման աշխատանքներ /երկրորդ մասնաշենքի ներքին հարդարման վերանորոգման աշխատանքներ, հատակներ. պրեսգրանիտե հատակ, լամինատե հատակ, մետլախե հատակ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 5 | Դռներ. պատուհաններ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 6 | Դռան ամրացման ծավալներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 7 | Նոր կառուցվող միջնորմներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| 8 | Տանիքի վերանորոգում /երկրորդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ. ապամոնտաժման աշխատանքներ, տանիքի փայտե կարկասի և ծածկույթի վերանորոգում, երկրորդ մասնաշենքի տանիքի վերնորոգման աշխատանքներ, կաթսայատան տանիքի վերանորոգման աշխատանքներ/ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ |
| | Բաժին 2 | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Ջրամատակարարում և կոյուղի | | |
| 1 | Ջրամատակարարում և կոյուղի /ներքին ջրամատակարարում, ներքին կոյուղի/ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում* |
| | | | |
| | Բաժին-3 | | |
| | Ջեռուցում | | |
| 1 | Ջեռուցման համակարգ I մասնաշենք | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում* |
| | | | |
| | Բաժին-4 | | |
| | Արտաքին կոյուղու համակարգ | | |
| 1 | Արտաքին կոյուղու համակարգ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում* |
| | | | |
| | Բաժին-5 | | |
| | Ջերմային ցանց | | |
| 1 | Գոյություն ունեցող ջերմատարի վերանորոգում /ջերմատար խողովակների մոնտաժում/ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում* |
| | Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում* |

** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը հաշվարկվում է համապատասխան տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու օրվանից: Աշխատանքները ավարտման ժամկետը չի կարող լինել ավելի ուշ, քան ս.թ դեկտեմբերի 1-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

------------ [illegible] Գասպարյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

------------ Ա. Գյոզալյան

/ստորագրություն/ Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 28 » « 08 » 2020 թ. կնքված*
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ըստ ամիսների, ընդ որում. | | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 2 | 45611100/543 | **Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2** («Իջևանի Գառնիկ Անանյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ) | | | | 55138254 | 55138254 | 55138254 | **55138254** | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա. Գյոզալյան
(ստորագրություն) Կ.Տ

**AMERIABANK**

24.08.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.8782.20

## ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.8782.20
## (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐՏԱՐՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից 17.07.2020թ. կնքված Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 պետական գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված Պրինցիպալի պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **55,138,254.00** (հիսունհինգ միլիոն մեկ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելիս հաշվի են առնվում Պայմանագրի կատարման շրջանակում Բենեֆիցիարի և Պրինցիպալի միջև երկկողմ պատշաճ ձևով հաստատված և Պրինցիպալի կողմից Երաշխիքը տվող անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա Երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից Պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 փետրվարի 2021թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

6.3) Պայմանագրի շրջանակում Բենեֆիցիարի և Պրինցիպալի միջև պատշաճ ձևով երկկողմ հաստատված բոլոր հանձնման-ընդունման արձանագրություն/ները կամ դրա/դրանց պատճենները:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն՝**
**Գագիկ Սահակյան**


Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am


#bankaboutyou

AMERIABANK

24.08.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.8781.20

**ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.8781.20**
**(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՐՏԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 17.07.2020թ. կնքված Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 պետական գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **5,513,826.00** (հինգ միլիոն հինգ հարյուր տասներեք հազար ութ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 փետրվարի 2021թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/88-2 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

6.3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն՝**
**Գագիկ Սահակյան**

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou